ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 5-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը և մեկնում Բեյրութի վրայով իր պաշտոնատեղին:

* * *

Փետրվարի 6-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան արարողություն՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի մահվան քառասունքի առիթով:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը քարոզում է՝ վեր հանելով հանգուցյալ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի եկեղեցանվեր գործունեությունն ու ծառայությունը Մայր Աթոռում՝ որպես Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ:

Այնուհետև ս. Գայանեի վանքում, տ. Հայկազուն արքեպիսկոպոսի շիրմի վրա, կատարվում է դարձյալ հոգեհանգստյան պաշտոն՝ մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության, ներկայությամբ սրբազանի հարազատների և հավատացյալ բազմության:

* * *

Փետրվարի 8-ին, երեքշաբթի.—«Ս. Ղևոնդյանց քահանայիցն» տոնի առթիվ հոգևոր ճեմարանի Ա լսարանի ինն սաներ ստանում են ուրարակրության աստիճան՝ ձեռամբ Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի: Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

* * *

Փետրվարի 18-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը:

Երեկոյան ժամերգությունից՝ հետո կատարվում է Մայր տաճարում «Տեառնընդառաջ»-ի նախատոնակը՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Այնուհետև Վեհարանի այգում Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, հոգևոր ճեմարանի դասախոսներով և ուսանողներով, վառում է «Տեառնընդառաջ»-ի ավանդական խարույկը, որի շուրջ ապա երգում և ուրախանում են ճեմարանի սաները:

*
* *

Փետրվարի 14-ին, երկուշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

*
* *

Փետրվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հանդիսավորապես սկսվում է Արևագալի ժամերգությունը, իսկ ուրբաթ օրերին կատարվում է Հսկումի արարողություն:

*
* *

Փետրվարի 20-ին, կիրակի.—Բ կիրակի քառասնորդական պահոց (Արտաքսման).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը և քարոզում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 27-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը, իսկ քարոզում է նորընծա տ. Մասիս աբեղա Գալստյանը՝ «Զի այս որդին իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ» (Ղուկ. ԺԵ 24) բնաբանով: